ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 925-Ա/Ք «09 » 07 2013թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել հանրակրթական դպրոցի <<Հայկական հարցի պատմություն>> առարկայի ծրագիրը՝ համաձայն Հավելվածի:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2013թ.հուլիսի 9-ի N925-Ա/Ք հրամանի

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ
(Հանրակրթական դպրոցի XI դասարանի համար)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Միջնակարգ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի և ավագ դպրոցի հումանիտար հոսքի համար նախատեսված <<Հայկական հարցի պատմություն>> դասընթացի ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի, Հանրակրթության պետական չափորոշչի և <<Հայոց պատմություն>> առարկայի ավագ դպրոցի չափորոշչի հայեցակարգային դրույթներն ու պահանջները:

Դասընթացի նպատակն է օգնել սովորողներին համակողմանիորեն ուսումնասիրելու հայոց ազգային հիմնախնդիրներից մեկի՝ Հայկական հարցի պատմությունը: Լայն առումով, Հայկական հարցը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն է՝ հանուն իր պատմական հայրենիքում ազգային պետականության վերականգնման, հանուն ազատ, անկախ և միացյալ Հայաստան կերտելու նվիրական նպատակի: Միջազգային դիվանագիտության առարկա դառնալուց ի վեր տարբեր երկրների ու կառավարությունների կողմից հաճախ են անտեսվել հայ ժողովրդի պատմական-ազգային իրավունքները: Ավելին՝ հայ ժողովուրդը իր բնօրրանում՝ Հայաստանում, ենթարկվեց ցեղասպանության: Այդ պահից Հայկական հարցի լուծման համար պայքարը ձեռք է բերել հստակ բովանդակություն՝ ճանաչում և փոխհատուցում: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է և սերունդների գործն է տրամաբանական ավարտին հասցնել այդ պայքարը: Հետևաբար, կարևոր է Հայկական հարցի պատմության ուսուցանումը Հայաստանի Հանարապետության հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում, երբ ամբողջանում է սովորողների աշխարհայացքն ու արժեքային համակարգը և նրանք պատրաստվում են ինքնուրույն կյանք մտնելու:

Նոր դասընթացի խնդիրներն են՝ սովորողներին ծանոթացնել Հայկական հարցի ամբողջական համակարգված պատմությանը, պատմական դասերի հիման վրա նրան

դաստիարակել մարդու և ժողովուրդների բնական ու պատմական իրավունքները հարգելու, ցեղասպանության երևույթի անվերապահ դատապարտման, անկեղծ հայրենասիրության ոգով: Դասընթացի ուսուցումը կնպաստի նաև Հայոց պատմության հիմնախնդիրների հիմնավոր յուրացմանը:

Ծրագրով դասընթացի համար նախատեսված է 34 ժամ: Հումանիտար հոսքի համապատասխան ենթահոսքերում կարող է հատկացվել նախատեսվածից ավել ժամաքանակ՝ կատարելով բաժինների ժամաքանակի համամասնական փոփոխություն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XI ԴԱՍԱՐԱՆ (34 ժամ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Դասընթացի բովանդակությունը, առանձնահատկությունները, ուսումնական նպատակն ու խնդիրները:

ԲԱԺԻՆ I. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ (4 ժամ)

ԹԵՄԱ 1. Հայկական հարց. ծագումը, էությունը և բովանդակությունը

Հայրենիք, ազգ, ազգային պետություն հասկացությունները: Ազգերի ինքնորոշման իրավունքը: Պատմական հայրենիքում ազգային պետություն ունենալու հայերի իրավունքը:

Հայոց անկախ պետականության կորուստը: Հայկական հարցի ծագումը, բովանդակությունը: Արևելյան հարցը: Հայկական հարցը՝ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս:

ԹԵՄԱ 2. Հայաստանի ազատագրության խնդիրը XVI դարից մինչև 1877-78 թվականների ռուս–թուրքական պատերազմը

Հայերի իրավազուրկ վիճակը Օսմանյան կայսրությունում և Պարսկաստանում:

Հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին քայլերը: Իսրայել Օրի: Արցախի և Սյունիքի զինված պայքարը՝ անկախության վերականգնման իրատեսական ուղի:

Ազատագրական պայքարը XVIII դ. երկրորդ կեսին, հայ քաղաքական մտքի վերելքը:

Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության կազմում: Ինքնավարության հույսեր:

ԹԵՄԱ 3. Հայ մշակութային զարթոնքը՝ Հայկական հարցի համար պայքարի վերելքի նախադրյալ

Մշակութային վերածննդին նպաստող գործոնները: Հայ գաղթավայրերի ավանդը: Եկեղեցու դերը: Դպրոցը, տպագրությունը, մամուլը, գրականությունը:

Հայոց զարթոնքի գաղափարախոսությունը:

Կրկնություն (1 ժամ)

ԲԱԺԻՆ II. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ (6 ժամ)

ԹԵՄԱ 4. Հայկական հարցը՝ միջազգային դիվանագիտության ոլորտում

Արևելյան հարցը և XIX դ. ռուս–թուրքական պատերազմները: Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Բեռլինի վեհաժողովը: Հայկական հարցի միջազգայնացումը:

Մեծ տերությունների քաղաքականությունը. հայկական բարենորոգումների խնդիրը:

ԹԵՄԱ 5. Ազգային կուսակցությունների գործունեությունը Հայկական հարցի լուծման ուղղությամբ

Հայ ազգային-քաղաքական կյանքի վերելքը Բեռլինի վեհաժողովից հետո: Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները:

Ազգային կուսակցությունների ստեղծումը: Հայկական հարցը կուսակցությունների ծրագրերում:

ԹԵՄԱ 6. Հայկական հարցը XIX դարի վերջին և XX դարի սկզբին

Հայկական հարցը 1880-1890-ական թվականներին: Մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Հայոց ցեղասպանության սկիզբը: Ձինված պայքարը XIX դարի վերջին - XX դարի սկզբին:

Երիտթուրքական հեղաշրջումը: Պանթյուրքիզմը՝ պետական քաղաքականություն: Հայկական հարցի վերաբացումը: Դիվանագիտական պայքարը տերությունների միջև: 1914 հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը:

Կրկնություն (1 ժամ)

ԲԱԺԻՆ III. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (6 ժամ)

ԹԵՄԱ 7. Առաջին աշխարհամարտը և Հայկական հարցը

Պատերազմի ռուս-թուրքական ճակատը: Հայերի քաղաքական ակնկալիքները պատերազմից: Կամավորական շարժումը: Սայքս-Պիկոյի համաձայնագիրը:

ԹԵՄԱ 8. Հայոց ցեղասպանությունը

«Ցեղասպանություն» հասկացությունը: ՄԱԿ-ը և ցեղասպանության հարցը: Հայոց ցեղասպանության իրագործումը՝ ծրագրված և պետական քաղաքականություն: Մեծ եղեռնը: Պետությունները և պետական արխիվները հայերի կոտորածների մասին:

Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու դատաստանը:

Ուրացում և պատմության խեղաթյուրում: «Սպիտակ գենոցիդը». ձուլում, մշակութային կոթողների ոչնչացում:

ԹԵՄԱ 9. 1917 թվականի ռուսաստանյան հեղափոխությունները և Հայկական հարցը

Արևմտյան Հայաստանի գրավված տարածքների նոր կարգավիճակը: Արևմտահայ և արևելահայ ազգային խորհուրդների ստեղծումը, գործունեությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:

Բրեստ -Լիտովսկի պայմանագիրը և Հայկական հարցը:

Տրապիզոնի և Բաթումի բանակցությունները: Երկրամասի ժողովուրդների անմիաբանությունը և շահերի անհամատեղելիությունը:

Հայաստանի անկախության հռչակումը: Բաթումի պայմանագիրը:

Կրկնություն (1 ժամ)

ԲԱԺԻՆ IV. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ (12 ժամ)

ԹԵՄԱ 10. Հայաստանի առաջին Հանրապետությունը Հայկական հարցի լուծման ճանապարհին

Նորանկախ Հայաստանը և Հայկական հարցը: Ադրբեջանի և Վրաստանի հավակնությունները հայկական տարածքների նկատմամբ: Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակումը:

Հայկական հարցը Փարիզի վեհաժողովում: Հայաստանի մանդատի խնդիրը: Սևրի պայմանագիրը: Կիլիկյան՝ Ֆրանսիայի մանդատ:

Հայկական հարցը քեմալա-բոլշևիկյան հարաբերությունների ոլորտում: Հայաստանի առաջին հանրապետության անկումը:

ԹԵՄԱ 11. Հայաստանի խորհրդայնացումը: ՀՍԽՀ-ի սահմանների ձևավորումը:

Հայաստանի խորհրդայնացումը: Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Հայաստանի տարածքային կորուստները: Հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանների ձևավորումը:

ԹԵՄԱ 12. ԽՍՀՄ-ը և Հայկական հարցը

ՀՍԽՀ-ն Անդրկովկասի դաշնության կազմում

Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ի կազմում: Խորհրդային պետության ազգային քաղաքականությունը:

Հայկական տարածքների հարցը Պոտսդամի խորհրդաժողովում:

Ազգային զարթոնքը: Այլախոհական շարժումը:

ԹԵՄԱ 13. Սփյուռքը՝ Հայ դատի պաշտպան (1921-1965 թվականներ)

Սփյուռքի ձևավորումը: Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում. մեծ տերությունների հրաժարումը Սևրի պայմանագրից: Հայկական հարցը Ազգերի լիգայում:

Սփյուռքահայության պայքարը Հայկական հարցի լուծման ուղղությամբ Երկրորդ աշխարհամարտի տարիներին և պատերազմից հետո: Համաշխարհային հայկական կոնգրեսը:

Եղեռնի 50-ամյակը և սփյուռքի շրջադարձը Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարում:

ԹԵՄԱ 14. Հայկական հարցը միջազգային ատյաններում (1965-1988 թվականներ)

Սփյուռքահայությունը՝ հայոց պահանջատիրության կրող: Պայքար ցեղասպանության ճանաչման և Հայկական հարցի վերաբացման համար: Հայկական հարցը ՄԱԿ-ում: Հայ դատի լուծման նոր ուղիների որոնումը: Սփյուռքահայ մարտական կազմակերպությունները, նրանց գործունեությունը:

Հայկական հարցի քննարկումը միջազգային կազմակերպություններում: Եվրախորհրդարանի՝ 1987 թ. հունիսի 18-ի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը:

ԹԵՄԱ 15. Հայկական հարցը և Թուրքիայի դիրքորոշումը

Հանրապետության ստեղծումը Թուրքիայում: «Թուրքիան՝ թուրքերի համար» կարգախոսը. հայերի նոր հալածանքները: Թուրքիայի դիրքերի ամրապնդումը Երկրորդ աշխարհամարտից հետո. Թուրքիան՝ ՆԱՏՕ-ի անդամ: Պանթյուրքիզմի վերածնունդը: Թուրքիայի պայքարն ընդդեմ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման:

ԹԵՄԱ 16. Արցախյան ազատագրական պայքարը՝ Հայկական հարցի պատմության շրջադարձային փուլ

Ազգային հարցի սրումը ԽՍՀՄ-ում վերակառուցման տարիներին: Ղարաբաղյան շարժումը: Միութենական և ադրբեջանական իշխանությունների դիրքորոշումը Արցախի հիմնախնդրում:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի աշխուժացումը: Հայաստանի անկախության վերականգնումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը:

Ռուսական և թուրքական գործոնները Արցախի հիմնախնդրում: Միջազգային կազմակերպությունները և Արցախի հիմնախնդիրը:

ԹԵՄԱ 17. Հայաստանի Հանրապետությունը և Հայկական հարցի լուծման հեռանկարները:

Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որպես ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ներկա փուլում: Հայկական հարցի լուծման հեռանկարները:

Կրկնություն (1 ժամ)
Ամփոփում (1 ժամ)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989:*
2. *Ադոնց Ն., Հայկական հարց, Երևան, 1996:*
3. *Ամուրեան Ա., Հայ Դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977:*
4. *Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Երևան, 1990:*
5. *Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:*
6. *Բարդակչյան Գ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան 1991:*
7. *Բարսեղյան Լ., Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, Երևան, 1999:*
8. *Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998:*
9. *Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990:*
10. *Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917 - 1923 թթ., Երևան, 1999:*
11. *Գևորգյան Հ., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Երևան, 1997:*
12. *Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը, 1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2: Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1989:*
13. *Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993:*
14. *Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976:*
15. ***Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում 1912 թ. Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914 թ., թարգմ. Ս. Աւագեան, Թիֆլիս, 1915:*
16. ***Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946:*
17. *Լազյան Գ., Հայաստանը և Հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1996:*
18. *Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970:*
19. ***Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915:*
20. ***Լեփսիուս Յ., Հայաստանի ջարդերը, Կ.Պոլիս, 1919:*
21. ***Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, 1930:*
22. *Խանլարեան Կ., Մահմեդականացած հայութիւնը ժամանակակից Թուրքիայում, «Հայոց պատմութեան հարցեր», թիվ 5, Երևան, 2005:*

23. *Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995:

24. Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսությունը, Երևան, 1999:

25. Կարապետյան Մ., Հայոց 1915 - 1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005:

26. Կիրակոսյան Ա., Ակնարկներ հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, 2006:

27. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:

28. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 1, Երևան, 1982, Գիրք 2, Երևան, 1983:

29. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1999:

30. Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:

31. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000:

32. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828 - 1923): Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:

33. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988:

34. **Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919:

35. *Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996:

36. Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր, մաս 1 - 3, Երևան, 1995:

37. Մաթոսյան Տ., Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. համեմատման փորձ, Երևան, 2005:

38. Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990:

39. Նասիբյան Ա., Բրիտանիան և Հայկական հարցը 1915 – 1923 թթ., Բեյրութ, 1994:

40. Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները: Հոդվածների ժողովածու, Երևան, 2007:

41. Պողոսեան Ս., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004:

42. Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան – Ռուսաստան – Թուրքիա, Երևան, 1995:

43. Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:

44. *Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:*

45. *Տասնապետյան Հ., Հայկական հարցը, Բեյրութ, 1977:*

46. *Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, հ. Ա, Երևան, 1994:*

47. *Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի փարեգրություն, Երևան, 1997:*

48. *Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001:*

49. **Փիրումյան Ռ., Հայկական հարցի պատմություն, Հանրակրթական դպրոցների 9 - 10-րդ դասարանների դասագիրք, Երևան, 2002:*

Ծանոթություն -

***Մեկ աստղանիշով առանձնացված գրքերը խորհուրդ է տրվում օգտագործել որպես ուսումնական ձեռնարկներ:**

****Երկու աստղանիշով առանձնացված գրքերը խորհուրդ է տրվում օգտագործել ռեֆերատներ, զեկուցումներ պատրաստելու և գործնական աշխատանքներ կատարելու ընթացքում:**